

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻՆ ԱՄԲՈՂՋԱՊԵՍ ՀԱՍՄԱՆԵԼԻ Է ԴԱՌՆՈՒՄ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ



ՆԵՐՍԾՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենքով) այսուհետ նախատեսվում են հարկ վճարողների բանկային հաշիվների շարժի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության տրամադրման, ինչպես նաև հարկային մարմինն օրենքով սահմանված պարզապահության տրամադրման գործընթացի վերաբերյալ կարգավորումները: Սույն իրավական ակնարկում փորձել ենք հակիրճ ամփոփել Օրենքով նախատեսված նոր օրենսդրական կարգավորումները:

Օրենքի փոփոխությամբ հարկային մարմինն պարզեցված ընթացակարգով հասանելի են դառնում հարկ վճարողի բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը:

Օրենքում ամրագրված կարգավորումները

Այսպես, Օրենքը սահմանում է, որ.

- հարկային հսկողության շրջանակներում հարկային մարմինը հարկ վճարողի յուրաքանչյուր բանկային հաշվի ամփոփ տեղեկությունները էլեկտրոնային համակարգի միջոցով ստանում է առևտրային բանկերից՝ Կենտրոնական բանկի միջոցով՝ մինչև շահութահարկի հաշվարկի, իսկ ֆիզիկական անձանց դեպքում՝ եկամտային հարկի տարեկան հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման՝ Օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը.

- Բանկային հաշվի ամփոփ տեղեկությունը ներառում է հարկ վճարողի բանկային հաշվի, արժույթի, հարկային տարվա հունվարի 1-ի և դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա մնացորդի, ինչպես նաև հարկային տարվա ընթացքում բանկային հաշվին մուտքագրված գումարների հանրագումարի և ելքագրված գումարների հանրագումարի վերաբերյալ տվյալները.
- Ֆիզիկական անձինք բանկային հաշվի քաղվածքները հարկային մարմին տրամադրելու պարտականություն ունեն, որպեսզի ըստ էության հարկային մարմինը հնարավորություն ունենա սահմանելու հսկողություն հայտարարագրերում արտացոլված եկամուտների և հարկերի ճիշտ հայտարարագրման ուղղությամբ,
- հարկային հսկողության կասեցման հնարավորություն է առկա մինչև բանկային հաշվի քաղվածքի տրամադրումը, քանի որ հակառակ պարագայում (չկասեցնելու դեպքում) հարկային հսկողության ժամկետը կարող է ավարտվել, որի արդյունքում հարկային հսկողությունը համարվի թերի կատարված, քանի որ այն չի կարող համարվել լիարժեք՝ առանց բանկային հաշվի քաղվածքի տվյալների ուսումնասիրության,
- Բանկային հաշվի քաղվածքը չտրամադրելու դեպքում այն պետք է տրամադրվի դատարանի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Կարգավորման հարաբերությունների վիճակը՝ մինչ օրենսդրական փոփոխությունները

Ըստ նախկին կարգավորումների.

- Հարկային մարմինը հարկ վճարելու պարտականություն ունեցող ֆիզիկական անձանց գծով հարկերի հաշվարկման առնչվող բանկային հաշվի քաղվածքներ ստանալու հնարավորություն չունեի.
- Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով հարկային մարմինը կարող էր ստանալ բանկային քաղվածքների վերաբերյալ տեղեկատվություն միայն կազմակերպությունների մասով:

Ծանուցում: Այստեղ ներկայացված մտքերը ունեն տեղեկատվական բնույթ և չեն հանդիսանում իրավաբանական խորհրդատվություն: Թեև այս ակնարկում գրվածը ճիշտ է հրապարակման օրվա դրությամբ, սակայն մենք չենք ստանձնում այն հետագայում թարմացնելու որևէ պարտավորություն:

Շուշանիկ Վարդանյան
Ավագ իրավախորհրդատու, փաստաբան
svardanyan@tk.partners

